# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 01/628/14հ

«22» 11 2013 թ.

<<ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>>
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆ Գ.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ
/ք.Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ/

Երևանի քաղաքապետին հասցեագրված Ձեր 01.11.2013թ. հարցման վերաբերյալ հայտնում եմ, որ Երևան քաղաքի Օղակաձև զբոսայգին հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը, որը ՀՀ հողային օրենսգրքի 10-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ ընդհանուր օգտագործման տարածք է:

Երևանի Օղակաձև զբոսայգու 1-ին հատվածից վարձակալության իրավունքով տրամադրվել է ընդհանուր 16056քմ մակերեսով հողամաս՝ զբոսայգու 2-րդ հատվածից վարձակալության իրավունքով տրամադրվել է ընդհանուր 6324քմ մակերեսով հողամաս, զբոսայգու 3-րդ հատվածից վարձակալության իրավունքով տրամադրվել է ընդհանուր 22569քմ մակերեսով հողամաս, զբոսայգու 4-րդ հատվածից վարձակալության իրավունքով տրամադրվել է ընդհանուր 19256քմ մակերեսով հողամաս, զբոսայգու 5-րդ հատվածից վարձակալության իրավունքով տրամադրվել է ընդհանուր 17823քմ մակերեսով հողամաս, իսկ զբոսայգու 6-րդ հատվածից վարձակալության իրավունքով տրամադրվել է ընդհանուր 16854քմ մակերեսով հողամաս: Վարձակալության տրամադրված հողամասի մակերեսների, հատվածների, վարձակալների, ինչպես նաև վարձակալության պայմանագրերի կնքման ամսաթվերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է սույն գրությանը կցված ցանկով: Բացի այդ՝ թեև Ձեր գրության մեջ նշված չէ, սակայն կից ցանկով ներկայացվում է նաև Օղակաձև զբոսայգու կառուցապատման իրավունքով տրամադրված հատվածների վերաբերյալ տեղեկատվություն /պայմանագրի կնքման ամսաթիվ, սուբյեկտ, հողամասի մակերես, հասցե/:

Վարձակալների և կառուցապատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են հողամասի վարձակալության, կառուցապատման պայմանագրերով և այդ անձանց տրամադրված քաղաքաշինական փաստաթղթերով: ՀՀ կառավարության 12.04.2001թ. հ.286 որոշումն ուժի մեջ մտնելուց հետո բոլոր պայմանագրերը կնքվել են այդ որոշմամբ

հաստատված պայմանագրերի օրինակելի ձևերին համապատասխան /կցվում է/, որում ամրագրված են վարձակալների ստանձնած բոլոր պարտավորությունները:

Ինչ վերաբերում է զբոսայգու տարածքում տեղաշարժման դժվարություն ունեցող քաղաքացիների համար մատչելիության ապահովմանը, ապա Երևանի քաղաքապետի 13.06.2012թ. հ.4562-Ա որոշմամբ հաստատվել է Երևան քաղաքում հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի մատչելիության ապահովման խնդիրների իրականացման ծրագիրը, և այդ միջոցառումների կատարման ապահովումը հանձնարարվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական ապահովության, ճարտարապետության և քաղաքաշինության, շինարարության և բարեկարգման, հանրակրթության, առողջապահության, տրանսպորտի վարչություններին և <<Երևաննախագիծ>> ՓԲԸ-ին /կցվում է/:

Տվյալ դեպքում՝ Օղակաձև զբոսայգու տարածքում տրամադրված հողամասերի կառուցապատման համար ճարտարապետահատակագծային առաջադրանքները տրվում են ՀՀ կառավարության 16.03.2006թ. հ.392-Ն որոշմամբ հաստատված կարգի համապատասխան՝ պարտադիր ամրագրելով հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի համար կենսագործունեության, մասնավորապես՝ տեղաշարժման համար մատչելի միջավայրի ապահովմանն ուղղված Հայաստանի Հանրապետության օրենսդրական և քաղաքաշինական բնագավառի նորմատիվ-իրավական ակտերով սահմանված պահանջները:

Առդիր՝ 15 թերթ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ Զ.ԱՌԱՔԵԼՅԱՆ

Կատ.Ա.Ստեփանյան